

այդ հիմքի վերայ կառուցուած հսկայական անխորտակելի շինուածքը, որի հովանին վայելում են յաճախ ընտանին ու օտարը հաւասար չափով: Սիրոյ և եղբայրութեան անուշից ո՞վ այսօր չի խօսում: Իսկ ուր սէր և եղբայրութիւն կայ, ուր ընկածին ոտքի են կանգնեցնում տառապեալի դատը պաշտպանում, վշտացեալին ախտիում, քաղցածին հաց տալիս, մերկին զգեստ ... ուր յաւիտենական ճշմարտութեան լոյսն է սփռւում, բարոյական սրբութեան հուրը բորբոքում—այնտեղ Աստուծոյ Հոգին է գործում այնտեղ ներկայ է և կենդանի Յարուցեալ Փրկիչը: Եւ ամէն անգամ երբ հնչում է Յարութեան աւետիսը քրիստոնեայ աշխարհի մէջ, պէտք է նոր զօրութեամբ հանդէս գայ նաև կենդանարար ս. Հոգին, և Քրիստոսի իւրաքանչիւր հաւատացեալ Աստուծային Հոգւոյ այդ շարժումն զգալով իւր սրբտի խորքում, յառաջ ընթանայ արիաբար կեանքի ասպարէզի վերայ՝ մասնակցելու ճշմարտութեան, սրբութեան և սիրոյ յաղթանակին, Յարութեան օրհներգը բերան առած.—Քրիստոս յարեալ ի մեռելոց, ալէլուիա:

Կ. Վ.



Զ Ա Տ Կ Ի Ն

Երբ դարնան առաջին ծիծեռնակի հետ
Նոր կեանքի մի վառ շունչ լցնում է հոգիս,
Երբ պղտոր վտակի ալիքներ վէտ—վէտ
Տալիս են մի քաղցրիկ ողջոյն հէք սրտիս,—

Զգում եմ, որ մաշուած ոյժերս են զարթնում,
Զգում եմ, որ դեռ ևս մօտ չէ ծերութիւն.
Նոր երգի դիւթական ձայներ եմ լսում,
Եւ մատաղ հուր—բոցով եռում իմ արիւն ...

Բայց երբ որ դարնան հետ լսում եմ մարդկանց
 Խնդագին աւետիք, թէ Քրիստոս յարեալ,
 Այս, բոլոր հրապոյրներն ատում եմ սրտանց
 Եւ դարնան բարիքներ մոռանում դիւրաւ:

Զգում եմ ես կեղծիքն այդ ուրախութեան,
 Եւ տեսնում, որ միայն մի օրուայ համար
 Ամէնքս էլ սուրբ անունն առնում ենք բերան
 Եւ առանց զգացմունքի կրկնում տղայաբար:

Եւ միշտ էլ այդպիսի օրերն աւելի
 Յիշեցնում են ինձ, թէ որքան է պակաս
 Մեզ հոգու զօրութիւն, թէ ինչպէս երկրի
 Ոյժն է մեզ քաշում դէպի վայր հանապաղ ...

Յ. Յովհաննիսեան.



ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՄԵՆՔ Ա. ԳՐԳԻՅ. *

ԺԹ. դարի վերջում քրիստոնէի ձեռքով գրուած մի
 գրքի մէջ պատահաբար կարդացել եմ հետեւեալ ուշա-
 դրութեան արժանի խօսքերը. Յայտնի է, որ Ինքը Քրիս-
 տոս չպատասխանեց «Ինչ է ճշմարտութիւնը» հարցին:

Այսպիսի համարձակ տգիտութիւն ոչ թէ բացառիկ,
 այլ միանգամայն բնական երևոյթ է ժամանակակից
 ինտելիգենցիայի մէջ: Աշխարհի Փրկչի մասին, որ Իւր հա-
 մար ասում էր՝ «Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և
 կեանք», «Ես ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկա-

* Նեպիւրեկի „Что есть истина“ գրքից.